ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- «ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ »

Դպրոց- ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԻՋՆ.ԴՊՐՈՑ

Ուսուցիչ- ՕՎՍԱՆՆԱ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Ղեկավար- ԿԻՄԱ ՕՀԱՆԵՍՅԱՆ

ՎԱՅՔ 2023

Բովանդակություն

Ներածություն……3

1. Խոսքի զարգացումը տարրական դասարաններում……5

1.1 Խոսքի տեսակներն ըստ նշանակության……8

2. Խոսքային մեթոդների բովանդակությունը և էություն տարրական դասարաններում……14

3. Վերջնարդյունք……22

4. Դասապլան……23

5. Եզրակացություն……32

6. Օգտագործված գրականություն……33

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Երեխայի խոսքի զարգացումը տարրական դասարաններում մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի զարգացման շնորհիվ է տեղի ունենում կրտսեր դպրոցականի սոցիալականացումը, հոգեկան զարգացումը, մտածողության զարգացումը: Խոսքի զարգացման խնդիրներից առավել կարևորվում են երեխաների կապակցված խոսքի զարգացումը, քանի որ կապակցված խոսքը մտավոր գործունեության բարձրագույն ձևն է և դրա զարգացման աստիճանով որոշվում է երեխայի խոսքային և մտավոր զարգացման մակարդակը:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ժամանակի թելադրանքով՝ ուսուցման առանձնահատուկ մոտեցում, ուշադրություն է պահանջում յուրաքանչյուր թևավոր միտք, յուրաքանչյուր լեզվական միավոր, որը զարգացնում է երեխաների ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը, հարստացնում լեզուն, խոսքը, բառապաշարը, և հարկ է, որ այն ուսուցանվի հավուր պատշաճի: Ուսուցչի խոսքի վարպետությունը միշտ էլ կարևոր պայման է հանդիսացել դասն առավել ընկալելի դարձնելու համար: Խոսքային մեթոդները կարևոր են դասի ընթացքի և թեման ավելի արդյունավետ յուրացնելու համար: Այստեղ կարևորվում է նաև մեթոդի ճիշտ ընտրությունը, նրա տեղին ու արդյունավետ կիրառումը:

Ուսումնասիրելով գիտամեթոդական գրականությունը, վերլուծելով տարրական դասարանների մայրենի լեզվի ծրագրերն ու դասագրքերը, բազմաթիվ մանկավարժական պրակտիկաներից քաղած գիտելիքներն ու փորձառու մանկավարժների մանկավարժական փորձերն ու կիրառած մեթոդները՝ աշխատանքում ներկայացրել ենք կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման առանձնահատկությունները, նրանց խոսքի զարգացման մեթոդներն ու սկզբունքները, ինչպես նաև ձևաբանական գիտելիքների մակարդակը, ձևաբանական իրողությունների ուսումնասիրության դերը բանավոր խոսքի զարգացման մեջ:

Ներկայացրել ենք նաև բազմաթիվ առաջադրանքների օրիրնակներ, խաղային վարժություններ, որոնք մեր կարծիքով առավել արդյունավետ են բանավոր խոսքի զարգացման և ձևաբանական գիտելիքների ամրակայման համար:

Նպատակը՝

- Բացահայտել կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման մեթոդական հիմքերը, ձևաբանական իրողություններ ուսումնասիրելիս, հիմնավորել դրանց իրականացման մանկավարժական պայմանները:

Խնդիրները՝

● Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման մակարդակը, բանավոր խոսքում առաջ եկած դժվարությունները:

● Բացահայտել և ներկայացնել ձևաբանական իրողությունների ուսումնասիրության դերը խոսքի զարգացման մեջ:

●Ներկայացնել կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման սկզբունքներն ու մեթոդները:

● Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների ձևաբանական գիտելիքների մակարդակը:

1. Խոսքի զարգացումը տարրական դասարաններում

Մանկավարժամեթոդական գրականության մեջ սահմանազատված մարդու խոսքի զարգացման փուլերից մեկը դա **կրտսեր դպրոցական տարիքն** է (7-ից մինչև 10 տարեկան)՝ խոսքային ձևերի ըմբռնում (բառի հնչյունային կազմ, բառապաշար, խոսքի քերականական կառուցվածք), գրավոր և բանավոր խոսքը, նրանց մատչելի նորմերի տիրապետում, մենախոսելու կարողության բուռն զարգացում:

Այս խնդիրները լուծելու մեթոդական հիմնական բազա կարող են հանդիսանալ լեզվաբանական, հոգեբանական և մանկավարժական տեսությունները: Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է նաև առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագործումը՝ դրանով ապահովելով նաև գիտության և պրակտիկայի կապը:

Այսօր գերակա խնդիր է դարձել սովորել սովորեցնելը: Տարրական դպրոցը եռաստիճան հանրակրթական դպրոցի առաջին աստիճանը լինելով՝ սովորողների հետագա զարգացման և հետագա ուսումնառության համար բացառիկ դեր ունի, և ծրագրերով նախատեսված գիտելիքներն ու կարողությունները դիտվում են որպես հանրակրթական պատրաստվածության անհրաժեշտ բաղադրիչ: Տարրական դպրոցում ուսուցումը պետք է նպաստի սովորողների ուսումնական գործունեության հմտությունների պատրաստմանը, նրանց ճիշտ աշխարհայացքի ձևավորմանը, օժանդակ անձի համակողմանի զարգացմանը և դաստիարակմանը:

Տարրականն կրթությունը հանրակրթության հիմքն է: Այս փուլում ուսուցման առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից՝ կրթական համակարգի սկզբնական փուլի պայմաններով: Այս փուլում տեղի է ունենում ուսումնական հմտությունների, ճանաչողական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորումը, ինքնագիտակցության զարգացումը:

Այս տարիքային փուլին բնորոշ է նաև այն, որ ի հայտ է գալիս շրջապատող մարդկանց, իր և բարոյական նորմերի մասին պատկերացումների բավականին գիտակցված համակարգ, որի հիման վրա էլ երեխան կառուցում է հասակակիցների և մեծահասակների, ծանոթ և օտար մարդկանց հետ իր հարաբերությունները:

Այստեղ խիստ կարևորվում են աշակերտի սովորել սովորելու և

հաղորդակցական կարողությունները։ Պետք է նկատի ունենալ նաև, որ արդյունավետ հաղորդակցման կարողությունների նպատակով խոսքի զարգացումը միայն մայրենի դասերի համար ու դրանց միջոցով չէ, որ տեղի է ունենում։ Մայրենի լեզվի ուսուցման մասին խոսելիս պետք է հստակ տարբերակել հարցի երկու կողմը՝ մայրենի լեզուն՝ որպես ուսումնական առարկա, և մայրենի լեզուն՝ որպես կրթության լեզու։

Խոսքի զարգացումը՝ ներառյալ բարեկիրթ խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը, պետք է լրացվի մեկ այլ խնդրով, ձևավորել այնպիսի անձ, որը տիրապետելով որոշակի բովանդակային նյութի, տեղեկատվության, կարողանա ճիշտ կողմնորոշվել կոնկրետ խոսքային իրադրության մեջ, իր խոսքը կառուցել այդ իրադրությանը համապատասխան, այդ թվում՝ հաշվի առնելով իր մտահղացումը, հաղորդակցական նպատակը և այլն։ Արդյունավետ հաղորդակցումը ենթադրում է ճիշտ, արդյունավետ և տեղին խոսք։

Դեռևս Հին աշխարհի նշանավոր հռետորները կարևորել են տեղին խոսքը, այսինքն խոսքի համապատասխանությունն այն հանգամանքներին և իրավիճակին, որում այն արտասանվում է, և այն անձին, ում հասցեագրված է։

Լեզուն և խոսքը հասարակական-պատմական զարգացման արդյունք են։ Նրանցում արտահայտվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը՝ ամենալայն իմաստով։

Լեզուն և խոսքը ծագել ու զարգացել են մարդու բազմաբնույթ գործունեության ընթացքում՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները։

«Խոսքի զարգացումը, նրա մշակումը, կատարելագործումը և հարստացումն է այն հաշվով, որ ապահովվի խոսքի ճիշտ, նպատակային ու գեղեցիկ կառուցումը թե՛ դդբառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի և թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների, բոլոր օրինաչափությունների տեսակետից »[1] (Ս.Գ.Աբրահամյան, Աշակերտի խոսքի զարգացումը, Եր., « Լույս », 1973, էջ 75)։

---

[1] (Ս.Գ.Աբրահամյան, Աշակերտի խոսքի զարգացումը, Եր., « Լույս », 1973, էջ 75)

Լեզուն և խոսքը նույն երևույթները չեն, թեև լեզվական գիտելիքների ձեռքբերման գործընթացը նույնպես նպաստում է սովորողների խոսքի զարգացմանը։ Երբ սկսած ուսումնական գործունեության առաջին օրից՝ երեխան ծանոթանում է հնչյունին, վանկին, բառին, նախադասությանը, հետագայում՝ խոսքի մասերին, նախադասության կառուցվածքին , նա ուսումնասիրում է լեզուն։ Երբ աշխատանք է տարվում նրա բանավոր և գրավոր խոսքի զարգացման ուղղությամբ, նա սովորում է լեզվից ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները գործադրել հաղորդակցական խնդիրների լուծման համար։ Հաղորդակցական (բանավոր և գրավոր) կարողությունների ձևավորման և զարգացման ուղղությամբ աշխատանքն էլ նպատակաուղղված է խոսքի զարգացմանը։

Այսպիսով, խոսքի զարգացում ասելով առաջին հերթին նկատի է առնվում բանավոր և գրավոր, ինքնուրույն, գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորումն ու զարգացումը։

Մենք ապրում ենք բնության ու մարդու արարած զարմանահրաշ աշխարհում, որը փորձում ենքճանաչել, գնահատել, պահպանել, զարգացնել։ Մենք խոսում ենք աշխարհի և աշխարհում կատարված ու կատարվող երևույթների մասին, և խոսքով ներկայացնում ենք՝ **ո՞վ է նա, ի՞նչ է սա, ինչպիսի՞ն է այն** և այլն։ Մարդուն հետաքրքրում է, և նա խոսում է նաև այն մասին, թե **ի՞նչ** և **ինչպե՞ս** են այդ անում, **ի՞նչ է կատարվում, ինչու՞է կատարվում, ինչպե՞ս է կատարվում** և այլն։ Այս ամենն էլ կազմում է մեր **խոսքի բավանդակությունը։**

1.1 Խոսքի տեսակներն ըստ նշանակության

Պատմողական խոսք – Որոշակի հաջորդականությամբ առարկայի գործողությունները ներկայացնելն է. (ի՞նչ է, ո՞վ է, այն ինչպե՞ս է տեղի ունենում):

Ընթերցած նյութի պատմելը կամ վերարտադրելը առարկաների կատարած գործողությունների, ընթերցած ստեղծագործության գործող անձանց արարքների, նրանց գործունեության մասին որոշակի հաջորդականությամբ հաղորդումն է։

- Տեքստի վերնագիրը պատմողին պիտի հուշի՝ ու՞մ կամ ինչի՞ մասին պիտի պատմի և ներկայացնի, թե ի՞նչ է տեղի ունենում։
- Պատմողական խոսքը սովորաբար սկսված է այնպիսի նախադասությամբ, որում ցույց են տրվում դեպքերի ժամանակը, տեղը, գործողությունները։ Այն պատասխանում է ի՞նչ, ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ հարցերին։
- Պատմելու ժամանակ օգտագործվում են մի անգամ, օրերից մի օր, այդ ժամանակ, հանկարծ, անսպասելի, այդ օրերին, դրա հետևից, հենց որ և նման այլ բառեր ու արտահայտություններ։

Նկարագրական խոսք - Առարկայի կամ երևույթի համալիր հատկանիշների միաժամանակյա նկարագրությունն է (ո՞վ է, ինչպիսի՞ն է)։

Առարկայի, մարդու, երևույթի տեսարանաի հատկանիշները կարելի է ներկայացնել՝ պայմանավորված խոսողի հետապնդած նպատակներով. ի՞նչ նպատակ է հետապնդում, ի՞նչն է կարևորում, հատկապես ո՞ր հատկանիշի վրա է ցանկանում հրավիրել ունկնդրի կամ ընթերցողի ուշադրությունը։ Սակայն կառուցվածքային գծակարգը շատ նկարագրությունների համար նույնն է։

Նկարագրական խոսքի կառուցվածքը



Դատողական խոսք – Տարբեր փաստերի,երևույթների,դեպքերի մեկնաբանում, բացատրում,պատճառահետևանքային կապերի բացահայտումն է.(ինչու՞ են այդ առարկաներն ու երևույթներն այդպիսին, ինչու՞ այդպես եղավ):

Դատողությունը պիտի ունենա այս կառուցվածքը



Դիտելով մեզ շրջապատող իրականությունը մենք հաճախ գնահատում ենք առարկայի, մարդու գործողությունը, միջավայրի վիճակը, մարդկանց արտաքինը, վարքը և այլն:

Գնահատող խոսք – Ինչ-որ բանի, ինչ-որ մեկի մասին արտահայտված վերաբերմունք , գնահատումն է:

Տարբերվում է գնահատման երկու տեսակ.

- մտածողության տրամաբանական կողմով պայմանավորված գնահատում,
- զգացմունքները, հոգեկան հուզումները ներկայացնող գնահատում:

Խոսքն ըստ արտաբերման եղանակի լինում են՝

- Արտաքին խոսք, որը ունկնդիրներին ուղղված արտասանված, հնչյունային ձև ընդունած խոսքն է:
- Ներքին խոսք, որը չարտասանված հնչյունային ձև չընդունած, չգրված « մտածված » խոսքն է:

Արտաքին խոսքի տեսակներն են՝ մենախոսությունը և երկխոսությունը:Արտաքին խոսքն ունի դրսևորման երկու ձև՝ գրավոր և բանավոր:

Պրոֆեսոր Ա. Տեր-Գրիգորյանը նշում էր, որ աշակերտի խոսքը ձևավորվում է երեք օջախներում՝ տանը, դպրոցում և հասարակական միջավայրում: Նայած թե երեխան խոսքային ինչպիսի միջավայրում է մեծանում, ինչ է լսում նա իր մեծերից տանը, փողոցում, կինոյում, թատրոնում, ըստ այդմ էլ ձևավորվում է նրա խոսքը:[2]Գաղտնիք չէ, որ շրջապատից հաճախ երեխայի խոսք են թափանցում գրական լեզվում չընդունված բառեր ու արտահայտություններ, և դպրոցում պետք է ուղիներ փնտրել այդ խնդիրները մանկավարժորեն լուծելու համար: Հասարակական միջավայրում մաքուր գրական լեզվի համար պայքարն ունի համընդհանուր նշանակություն: Իսկ հասարակական միջավայրի մարդիկ երեկվա երեխաներն են, ուրեմն պիտի սկսել երեխաներից: Տանը, դպրոցում, ամենուրեք պիտի հետևողական ու կազմակերպված աշխատանք տանել երեխայի խոսքի զարգացման ուղղությամբ: Չպետք է մոռանալ, որ երեխայի լեզվական գիտելիքներով է պայմանավորված նաև մյուս առարկաների հաջող ուսումնասիրումը: Մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ գրական կենդանի լեզվի ուսուցումն է, աշակերտի մեջ խոսքի կուլտուրայի մշակումն ու զարգացումը, որովհետև առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել ու իրականացնել երեխայի լիարժեք կրթությունն ու դաստիարակությունը: Լեզվի մեջ և լեզվի միջոցով է, որ երեխան շրջապատի բնության ու հասարակության մասին ստանում է այն տեղեկություններն ու գիտելիքները, որոնք անհրաժեշտ են մարդուն այդ բնության ու հասարակության մեջ ապրելու, աշխատելուև պայքարելու համար:

2.Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1980, էջ 412:

Խոսքի զարգացման համար երեխայի կրտսեր դպրոցական տարիքը անփոխարինելի մի ժամանակաշրջան է: «Այս տարիքում երեխան, երբեմն իր համար էլ աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ է սովորում, ընկալում է լեզվի այն հիմնական ատաղձն ու յուրահատկությունները, որը հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում չափահաս մարդկանց»: [3] Դասավանդման ընթացքում այս հանգամանքը պետք է հաշվի առնի ուսուցիչը և տարրական դասարանները դարձնի երեխայի խոսքի զարգացման հիմնական օղակ, մայրենի լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի ուսուցման ժամանակաշրջան:Առհասարակ ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Հենց այդ առումով էլաշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դարձնել:

Բանավոր խոսքն արտահայտչականությամբ ու հուզականությամբ ավելի բնական, կենդանի, տպավորիչ ու ազդեցիկ է, քան գրավոր խոսքը, որը, ճիշտ է, ավելի մշակված, հղկված ու կատարյալ է, սակայն ինչպես որոշ մեթոդիստներ են ասում՝ մի տեսակ «արհեստական, ձեռքբերովի լեզու է» և մարդ այն տիրապետում է մեծ ջանքերի ու հետևողական աշխատանքի շնորհիվ: [4] Սակայն նույնիսկ այդ դեպքումգրավոր խոսքի տիրապետման հիմնական միջոցը մնում է բանավոր խոսքը, որովհետև այն հենվում է բանավոր խոսքի վրա: Բանավոր խոսքը պետք է լինի անմիջական, ունենա բարձր արտահայտչականություն, ճիշտ արտահայտիմարդկային հույզերը, ապրումները տրամադրություններն ու զգացմունքները: Վերը նշված բանավոր խոսքին առաջադրած պահանջներին տարրական դասարանի աշակերտների բանավոր խոսքն այնքան էլ չի համապատասխանում: Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը ուշադրություն դարձնելիս պետք է շեշտը դնել հենց այս առանձնահատկությունների զարգացման վրա, զարգացնելով երեխայի ստեղծագործական մտածողությունը, ձևաբանական իրողությունների գրական ճիշտ նորմերին տիրապետելը:

3.Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1980, էջ 404:

4.Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2009, էջ 291:

Այդ իսկ պատճառով տարրական դասարանների դասագրքերում շատ են հանդիպում «Հորինի՛ր պատմություն նկարի շուրջ»առաջադրանքները, որոնք զարգացնում են երեխայի խոսքը։ Սրանց միջոցով ստուգվում է և՛ երեխաների տիրապետած, ճիշտ օգտագործված արտահայտչամիջոցները, և՛ ձևաբանականգիտելիքների մակարդակը, և՛ խոսքի ճկունությունը, և՛ ստեղծագործական մտածողությունը։«Այն երեխան, որի զարգացումը բռնի կերպով չի աղճատվել, մեծ մասամբ հինգ կամ վեց տարեկանում , արդեն իր մայրենի լեզվով խոսում է աշխույժ ու ճիշտ, սակայն մի մտածեք՝ ինչքա՞ն գիտելիքներ, զգացմունքներ, մտքեր, տրամաբանություն և նույնիսկ փիլիսոփայությունէ հարկավոր, որպեսզի

կարելի լինիորևէ լեզվով խոսել այնպես, ինչպես իր մայրենի լեզվով խոսում է վեց կամ յոթ տարեկան ոչ հիմար երեխան» :[5]

Տարրական դասարանի աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար բացառիկ կարևոր ուղենշային դեր ունի ուսուցչի խոսքը, որը դիտվում է իբրև կենդանի, զարգացող ու ծավալվող, երեխայի հոգու հետ հաղորդակցվող, նրա հետաքրքրություններին ու որոնումներին բավարարություն տվող խոսք, որովհետև բնական ձևով արտասանվող կենդանի ու անմիջական խոսքն ավելի խորն է ազդում մարդու վրա, քան կարդացածը: Ընդ որում, Ջ. Գյուլամիրյանը,կարևորելով այս հարցը, գրում է, որ տարրական դասարաններում մայրենի լեզվի դասերին պետք է խուսափել տեսական կանոնների և սահմանումների, քերականական իրողությունների բերանացի շարադրումից, որոնք աշակերտներից պահանջում են միայն լսել, ընկալել և նույնությամբ վերարտադրել։[6]

Այս առումով ուսուցչի խոսքը պետք է լինի պարզ, հստակ, մատչելի ու գրավիչ, որպեսզի երեխաներին տանի իր հետևից, սիրել տա մեր լեզուն։

Տարրական դասարանների աշակերտների բանավոր խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն զրույցները։ Երեխաների դպրոց գալու առաջին իսկ օրից սկսած ուսուցիչը նրանց հետ զրուցելու բազմաթիվ առիթներ է ունենում։

5.Կ.Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, Եր., 1949, էջ 129-130:

6. Ջ. Գլուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2009, էջ295:

Սկզբնական շրջանում այդ զրույցը կարող է պարզ հարց ու պատասխանի բնույթ կրել, իսկ հետագայումաշակերտների գիտելիքների ընդարձակմանը և բառապաշարի հարստացմանը զուգընթաց, այն կարող է աստիճանաբար վերածվել ակտիվ, երկկողմյան զրույցի: Մեր աշխատանքում հետագայում կներկայացնենք զրույցի օրինակներ, խոսքի մասերի ուսուցման ժամանակ, որտեղ կտեսնենք թե ինչքան արդյունավետ է նման մեթոդով աշխատելը և ինչքան է զարգացնում ու հարստացնում երեխայի բառապաշարը:

Այսպիսի զրույցների համար թեմաներ կարող են լինել աշակերտների ընտանիքը,ընկերները, դասերը,դպրոցական խաղերն ու պարապմունքները,ընտանի և վայրի կենդանիները, բնական ու հասարակական երևույթները՝ նայած դասարանի ու աշակերտների տարիքային առանձնահատկությունների:Այս զրույցների ընթացքում աշակերտները, եթե ծանոթ են զրույցի նյութին, հնարավորություն են ունենում խոսել պարզ, հակիրճ, կապակցված կերպով պատասխանել տրված հարցերին կամ շարադրել իրենց իմացածը այս կամ այն հարցի վերաբերյալ: Դա մի կողմից նրանց խոսել, իրենց մտքերը շարադրել է սովորեցնում, իսկ մյուս կողմից՝ուսուցչին հնարավորություն է տալիս հղկել, մշակել ու մաքրել նրանց լեզուն:Հետևաբար, այսպիսի զրույցներին որքան կարելի է շատ տեղ պետք է տալ դասավանդման ընթացքում՝ հատկապես առաջին դասարանում, քանի որ հատկապես առաջին դասարանի աշակերտի խոսքը շատ է կաղում, խոսքում անինքնավստահությունը շատ է:

2. ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Զրույցը պետք է նախորդի կարդալուն, որպեսզի հող ստեղծի լսածը հասկանալու և գիտակցորեն կարդալու համար:

Կ. Դ. Ուշինսկի

Մանկավարժության մեջ ամենատարածվածն ու ամենակիրառելին խոսքային մեթոդներն են, որոնց քննությանն անդրադարձել են բոլոր մեծանուն մանկավարժները, օրինակ՝ Յան Ամոս Կոմենսկին խոսքային մեթոդների շարքում մեծ նշանակություն էր տալիս զրույցի մեթոդին: Նրա կարծիքով՝ զրույցը պետք է վարել հաճելի ձևով, երբեմն սրամտելով, «հաճելին օգտակարի հետ միացնելով» , աշակերտների բացառիկ ակտիվության պայմաններում: Հաճախ պետք է ընդհատել զրույցը և աշակերտներից մեկին հարցնել, թե ի՞նչ ասվեց, ի՞նչ բացատրվեց:

Զրույցի մեթոդին բացառիկ նշանակություն տալով՝ Կոմենսկին գտնում էր, որ դասագրքերը պետք է «կազմվեն գերազանցապես երկխոսությունների ձևով» : Ինչպես նաև կարևորում էր դերերով կարդալու մեթոդը: Ըստ նրա՝ դա երեխաների մոտ համարձակություն է մշակում, նրանք ավելի ու ավելի են հավատում իրենց ուժերին, խոսելու իրենց կարողություններին և աստիճանաբար հաղթահարում են ընկճվածությունն ու ամաչկոտությունը:

Կոմենսկին մեծ տեղ է տվել նաև բացատրելու մեթոդին: Նա գտնում էր, որ ոչինչ չպետք է հանձնարարել՝ կատարելու համար, բացի այն բանից, որի կատարելու ձևերն ու միջոցները բավականաչափ բացատրված են:

Ուսուցման կարևոր մեթոդներից մեկն էլ Կոմենսկին համարում էր բանավեճը: Այս մեթոդը տարբեր չափերով ու ձևերով նա կիրառելի էր համարում ուսումնառության բոլոր աստիճաններում:

Առաջարկվող մեթոդները, անշուշտ, բազմազան են, սակայն ուսուցիչը նախ պետք է քաջատեղյակ լինի հաղորդման մեթոդերին, տիրապետի դրանց գործադրմանը, մանավանդ որ մեթոդների ընտրության համար կան մի քանի գործնական առաջարկներ: Այսպես՝ ուսուցման մեթոդներ ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի:

Ա. նյութի առանձնահատկությունները և նպատակադրումը,

Բ. շրջապատի հնարավորությունները,

Գ. դպրոցի նյութական բազան,

Դ.դասարանի ընդհանուր մակարդակը և երեխաների տարիքային առանձնահատկությունները:[7]

Ուսուցիչը պիտի հաշվի առնի նաև դասարանի ընդհանուր մակարդակը, թույլ դասարաններում ավելի բացատրական, ցուցադրական, էքսկուրսիոն ինդուկտիվ մեթոդներ պետք է գործադրի, իսկ ավելի ուժեղ դասարաններում գործադրի դեդուկտիվ մեթոդներ:

Ուսուցիչը դասը պետք է այնպես վարի, որ գործադրված մեթոդները հետաքրքրություն առաջացնեն և զարգացնեն երեխաների ստեղծագործական կարողությունը: Աշակերտների խոսքի զարգացումը հաջող կազմակերպելու և ճիշտ ընթացքով տանելուհամար անհրաժեշտ է օգտվել ժամանակակից դիդակտիկայում երաշխավորված և պրակտիկայում ճանաչում գտած բացատրական-ցուցադրական, վերարտադրողական, պրոբլեմային շարադրանքի, մասնավոր-որոնողական կամ էվրիստիկական և հետազոտական մեթոդներից:

Բացատրական-ցուցադրական մեթոդը ուսուցման արդյունավետ եղանակներից մեկն է, որի շնորհիվ աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ և հմտություններ:Այս մեթոդը կիրառելիս աշակերտներն օգտվում են ինֆորմացիայի այնպիսի աղբյուրներից ու միջոցներից, ինչպիսին բանավոր ու գրավոր (ուսուցչի, տպագրված) խոսքն է, իրականության առարկաներն ու երևույթները, ռադիոն ու հեռուստատեսությունը, կինոն և զննական այլ միջոցները: Այդ միջոցների հաղորդման ու ցուցադրման ձևերն ու եղանակները նույնպես բազմազան են: Դրանք են՝ պատմումը,բացատրումը, զրույցը, դասախոսությունը, գրքի ընթերցումը, նկարների, գծապատկերների, կինոնկարների ցուցադրումը, և այլն:

---

[7]Գյուլբուդաղյան , Հայոց լեզվի մեթոդիկա , Երևան , 1978, էջ 108- 109:

Օրինակ՝ տարրական դասարաններում ձևաբանության ուսուցումը ուսուցիչը կարող է ներկայացնել բազմաբովանդակ նկարների ցուցադրության միջոցով: Օրինակ՝ խոսքի մասերի ուսուցման ժամանակ կարելի է ցույց տալ պատկերազարդ նկար, որն արտահայտում է որոշակի իմաստ, բովանդակություն,այդ նկարից դուրս գրել տարբեր նախադասություններ և այդ նախադասություններից էլ առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառեր: Խոսքի զարգացման և ձևաբանական գիտելիքների ամրակայման համար արդյունավետ են նաև այնպիսի առաջադրանքներ ինչպիսիք են օրինակ՝

- Կազմի՛ր այնպիսի նախադասություններ, որ հետևյալ բառերը մի դեպքում լինեն գոյական, մյուս դեպքում՝ ածական: Սուտասան, առաջնորդ, իմաստուն, գիտնական, բժիշկ:
- Կազմի՛ր մի նախադասություն ինչպիսի՞, ո՞վ, ի՞նչ է անում, որտե՞ղ հարցերին միջոցով:
- Առարկա և գործողություն ցույց տվող բառերով կազմի՛ր նախադասություններ: Կռունկ, աղջիկ, հայրիկ, որսորդ Խղճալ, թռչել, կրակել, խնամել:
- Միևնույն գոյականի համար ընտրի՛ր համապատասխան մի քանի բայ: Շուն, ջուր, երեխա, ծառ, հերոս, տերև:

Աշակերտների ստեղծագործական կարողությունների և տրամաբանական մտածողության զարգացմանը մեծապես օգնում է պրոբլեմային շարադրանքի մեթոդը:Այս մեթոդի համար հատկանշականը այն է, որուսուցիչն ինքն է պրոբլեմներ առաջադրում և ինքն էլ լուծում: Իր շարադրանքի ընթացքում նա տալիս է գիտական ճանաչողական բանալի, պրոբլեմի լուծման համոզիչ օրինակներ, իսկ աշակերտները մտովի հետևում են ուսուցչի տրամաբանությանը, ապացույցների ճշտությանը, եզրակացություններին:

Ուսուցման պրոցեսում գործադրվում են այնպիսի մեթոդներ,որոնք սերտորեն առնչվում են պրոբլեմային ուսուցման հետ և ստեղծագործական բնույթ կրում: Դրանք են մասնավոր-որոնողական կամ էվրիստիկական և հետազոտական մեթոդները: Դրանց կիրառման շնորհիվ աստիճանական բարդացմամբ առաջադրվում են խնդիրներ, հարցեր, որոնք ուսումնասիրում են իրենք աշակերտները և գտնում դրանց պատասխանները:

Անհրաժեշտ է հաշվի առնել մի կարևոր հանգամանք. նշված մեթոդները դասավանդման ընթացքում պետք է կիրառվեն ստեղծագործաբար: Քարացած ձևերն ու ստանդարտ մեթոդներն ուսուցչին զրկում են ինքնուրույնությունից, ստեղծագործական մոտեցումից: Բացի ուսուցման մեթոդներից շատ արդյունավետ է նաև բազմապիսի խաղերի գործադրումը ուսուցման գործընթացում, որը բարձրացնում է հետաքրքրությունը, ակտիվացնում է, բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը: Նմանատիպ խաղի օրինակ է «Վիկտորինա» խաղ-մրցույթը, որին երեխաները մասնակցում են մեծ ակտիվությամբ ու հետաքրքրությամբ:

Ստորև կներկայացնենք դասի օրինակ, որում գործադրվել են«Զրույցի», «Բացատրական-ցուցադրական», «Պրոբլեմային շարադրանքի», «Մտագրոհի», «Վերարտադրական»մեթոդները և մի քանի խաղային վարժությունն, ինչպես նաև կանդրադառնանք ձևաբանական իրողությունների ճանաչմանը և ունեցած գիտելիքների ամրապնդմանը:

Կ. Դ. Ուշինսկին, ռուսաց լեզվի նախնական դասավանդման մասին իր հոդվածում, խոսելով լեզվի ուսուցման զննականության մասին, գրում է «Առաջին վաժությունների համար անհրաժեշտ է առարկան անմիջապես արտացոլվի երեխայի հոգում, որպեսզի այսպես ասած ուսուցչի աչքի առաջ և ղեկավարությամբ երեխայի զգայությունները վերածվեն հասկացությունների, դրանցից կազմվի միտք, իսկ միտքը խոսքի ձև ստանա: Մեթոդի ճիշտ ընտրությունը և նրա ռացիոնալ օգտագործումը, առարկայի տիրապետման հետ միասին, ուսուցման կատարելիության անփոխարինելիև ամենահիմնական պայմանն է, բայց պիտի գիտենալ նաև պատրաստել օբյեկտը, տրամադրել և ապրումներ ստեղծել:

Այս տարիքում պայմանավորված երեխայի մտածողության գործնականությամբ ու պատկերացությամբ, նրա բանավոր խոսքն անպայման « հենակետի » կարիք ունի՝ ի դեմս նկարների, գծապատկերների, նախապես կարդացած պատմությունների կամ տրված որոշակի բառաշարքի:

Երեխաներն ավելի ազատ ու արդյունավետ են շփվում, հաղորդակցվում, խոսում, քննարկում այն թեմաների շուրջ, որոնք նրանց հոգեհարազատ են, և որոնք բխում են նրանց կենսափորձից: Ուստի շատ կարևոր է երեխայի կեսափորձը բերել դասարան:

Խոսք զարգացման աշխատանքը երեխայի կենսափորձին առնչվելու նպատակով կարելի է առաջարկել դպրոց բերել լուսանկարներ, որոնք առնչվում են իր առօրյային՝ տանը, դպրոցում, ընկերական շրջապատում և այլն։ Դրանք կարող են պատկերել՝

- ընտանեկան տոնախմբություն,
- ընտանեկան ճանապարհորդություն,
- դպրոցական էքսկուրսիա,
- դպրոցական առօրյա,
- սպորտային մրցումներ և այլն։

Օգնեք երեխային այս լուսանկարներից ընտրելու մեկը, որի մասին առավել շատ ասելիք կարող է ունենալ։ Նկարները կարելի է դնել ինքնաշեն շրջանակների մեջ, դասարանում առանձին տեղ փակցնել, որպեսզի դասամիջոցներին երեխաները կարողանան ուսումնասիրել ընկերների լուսանկարները։

Այս հնարքը մեծապես ընդլայնում է երեխաների խոսքի հնարավորությունները, քանի որ եթե դասգրքի լուսանկարի կամ կարդացած պատմության մասին նա գիտի միայն այն, ինչ պատկերված կամ գրված է, ապա իր ծննդյան օրվա կամ ընտանեկան ճանապարհորդության մասին բազմաթիվ բաներ կարող է պատմել, որոնք « կադրից դուրս » են մնացել։

Ընդ որում այդ լուսանկարների մի մասը կարող են համադրվել դասագրքի թեմաների հետ, ուստի կարող ենք օգտագործել նաև հետագա դասերի ընթացքում՝ ընդլայնելու համար « դասագրքի շրջանակները »։

Նկարները, մանավանդ երբ դրանք գունավոր են, շատ վառ տպավորություն են թողնում երեխաների վրա։ Այս առումով առաջին դասարանից սկսածմայրենի լեզվի ուսուցման ընթացքում շատ մեծ տեղ պետք էտալ նկարների օգտագործմանը, որովհետև նկարները նպաստում են երեխայի տարածական ըմբռնումների, պատկերացումների ու խոսքի զարգացմանը։

Օրինակ՝ առաջին դասարանի դասագրքերը համարյա ամբողջությամբ հիմնված են այս հիմքի վրա՝ յուրաքանչյուր էջի վրա կան նկարներ, որոնք երեխաները պետք է վերարտադրեն։ Երբ աշակերտները նկարի շուրջ տարվող բազմաթիվ վարժությունների միջոցով կսովորեն նկարները «ընթերցել», դրանց

բովանդակությունը պարզ,կապակցված ու գեղեցիկ կերպով վերարտադրել, կարելի է անցնել առաջադրված նկարին նախորդող կամ հաջորդող գործողությունների կռահման վարժություններին, որոնք մեծապես նպաստում են երեխաների ստեղծագործական կարողությունների ու երևակայության զարգացմանը: Օրինակ՝ տարրական դասարանի դասագրքերում կան նմանատիպ վարժությունների բազմաթիվ օրինակներ.

- Հորինի՛ր պատմություն նկարի շուրջ:

Երեխաները նկարի բովանդակությունը գեղեցիկ կերպով վերարտադրում են, ամեն մեկը յուրովի և շատ արդյունավետ կլինի լրացուցիչ առաջադրանքներ տալ նկարի վերաբերյալ: Օրինակ՝

- Տվյալ պատմությունից դուրս գրի՛ր առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերը:
- Տվյալ բառերից մի քանիսով կազմի՛ր նախադասություններ:
- Բնագրից գտի՛ր գործողություն ցույց տվող բառեր: Վերափոխի՛ր ըստ նմուշի:

  Հասնում է – հասավ

  Տեսնում էր - տեսավ

Նկարների շուրջ բանավոր պատմություններից հետո երեխաներին առաջարկում ենք այդ պատմությունները մի քանի նախադասությամբ գրավոր

շարադրել։

Երեխաներին ուղղորդելիս, ինչպես նաև պատմություններն առավել հարստացնելու նպատակով կարելի է լրացուցիչ հրահանգներ ու առաջադրանքներ տալ.

Օրինակ՝

1. Գրիր այն մասին, ինչ երևում է նկարում։
2. Այդ նկարին առնչվող մի քանի երկխոսություն գրիր։

Բանավոր խոսքի զարգացման համար արդյունավետ կարող են լինել այնպիսի առաջադրանքները, որոնք հնարավորություն են տալիս երեխային հետևելու իր շրջապատին, նկատելու հետաքրքիր մանրամասները, պատմելու դրանց և իր հույզերի մասին, ասենք՝ այսպիսի վերնագրով՝

« Օրը սկսենք բարի լուրով »

« Ի՞նչ հետաքրքիր բան եմ տեսել, լսել, իմացել, արել …… »

« Իսկ դուք գիտե՞ք որ …… » և այլն։

Երեխաներին կարելի է առաջարկել ամեն օր դպրեց կամ դպրոցից տուն գնալիս ուշադիր հետևել շրջապատին, գտնել հետաքրքիր, տպավորիչ սյուժեներ, դեպքեր, իրադարձություններ, որոնց մասին հետո պիտի պատմեն դասարանում։

Կարևոր է պահպանել այն պայմանը, որ շաբաթվա ընթացքում բոլոր երեխաները պետք է գոնե մեկ անգամ հանդես գան որպես « լրատու »։

Իսկ այն երեխաները, ովքեր այդ օրը չեն պատմում իրենց լուրերը, կարելի է առաջարկել դասամիջոցին պատմել դրանք ընկերներին կամ տանը ծնողներին պատմել դասարանում ընկերների պատմածից ամենաշատ դուր եկածները։

Երեխաների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում է նաև հեքիաթներ պատմելը։ Երեխաները չափազանց շատ են սիրում հեքիաթներ, մեծ ուրախությամբ ու հաճույքով են պատմում իրենց լսած ու կարդացած հեքիաթները։ Այս բանը պետք է օգտագործել աշակերտների բանավոր խոսքը զարգացնելուն կատարելագործելու համար։ Երեխաներին շատ հաճախակի հնարավորություն պետք է տալ իրենց իմացած հեքիաթները բարձրաձայն պատմելու։ Դասագրքից անցած մի հեքիաթ պետք է առիթ

տա համանման բազմաթիվ այլ հեքիաթներ պատմելու, տարբեր ձևերով դրանք վերստին ու վերստին վերարտադրել տալու, որովհետև դա մեծապես նպաստում է երեխաների մեջ պատմելու կարողության զարգացմանը, հղկում ու կատարելագործում է նրանց բանավոր խոսքը:

Բանավոր խոսքի զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի առաջադրված նյութի անգիր անելը: Բանաստեղծություններ ու գեղարվեստական արձակ հատվածներ անգիր անելը մեծապես նպաստում է տվյալ նյութի բովանդակության խոր ընկալմանը, այդ բովանդակությունն արտահայտող բառերի ու արտահայտությունների յուրացմանը, շատ բանով օգնում է նաև խոսքի տոնի և տեմպի մշակմանը:

Անգիր անելը, սակայն, աշակերտների բանավոր խոսքը կզարգացնի միայն այն դեպքում, երբ աշակերտները գիտեն բնագիրը շատ լավ կարդալ, բառերը բացատրել, պատկերացնում են, թե ինչպես են կատարելու հանձնարարությունը, ինչպես են արտասանելու և այլն, որոնք իհարկե տեղի են ունենում ուսուցչի ուղղորդմամբ և օրինակով: Միայն այս դեպքում է, որ անգիրը կնպաստի աշակերտի բանավոր խոսքի զարգացմանը, նրա լեզուն կհարստացնի նոր բառերով ու դարձվածքներով, կբարձրացնի խոսքի կուլտուրան:

Ամփոփիչ դասերը ևս նպաստում են աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը: Ամփոփիչ դասերին, եթե միայն ուսուցիչը դրանք լավ է նախապատրաստում, երեխաները սովորում են ինքնուրույն խոսք կառուցել, ընդհանրացումներ կատարել, խոսել ու դատել, եզրակացություններ անել, որոնք բանավոր խոսքի մշակման ու կատարելագործման համար շատ կարևոր նշանակություն ունեն:

Տարրական դասարանների աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում են նաև հանդեսները, աշակերտական ցերեկույթներն ու հավաքները, եթե միայն դրանք լավ են նախապատրաստվում: Սրանից հետևություն, որ կրտսեր դպրոցում որքան հնարավոր է շատ պետք է կազմակերպվեն միջոցառումներ: Մեր մանկավարժական պրակտիկաների ընթացքում կատարելով բազմաթիվ միջոցառումներ,նկատեցինք, թե երեխաները ինչքան բարձր ոգևորվածությամբ են մասնակցում, սովորում շատ օգտակար բաներ և բարձրանում է խմբային

համագործակցությունը։

Չափազանց կարևոր է երեխաների մեջ սկզբից ևեթ մշակել սեփական խոսք կառուցելու կարողություն, լեզվական ճաշակ ու լեզվազգացողություն, իսկ դրա համար պետք է միշտ ազատություն տալ երեխային մտածելու և խոսելու՝ հետևելով նրա խոսքի գրագիտական ճշտությանը։

Աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը նպաստում է նաև քերականության և ուղղագրության ուսուցումը։

Երեխաների խոսքի զարգացումը ոչ միայն մայրենի լեզվի ուսուցչի, այլև մնացած բոլոր ուսուցիչների ու ամբողջ մանկավարժական կոլեկտիվի հոգածության առարկան պետք է լինի։ Սխալ խոսելիս աշակերտին պետք է ուղղել ամեն տեղ և ամենուրեք, որպեսզի նա ինքն իր լեզվի նկատմամբ մշտական հսկողություն սահմանի և խոսի այնպես, ինչպես պահանջվում է։ Այսպիսով, բանավոր խոսքը ոչ միայն մարդու զարգացած լինելու հիմնական չափանիշներից է, ամենօրյա հաղորդակցման միջոցը, այլև գրավոր խոսքի զարգացման հիմքերի հիմքը, որը պետք է զարգացնել՝ ելնելով սովորողի տարիքային առանձնահատկություններից։

3. Վերջնարդյունք

Կբացահայտենք կրտսեր դպրոցականի խոսքի զարգացման մեթոդական հիմքերը, ձևաբանական իրողություններ ուսումնասիրելիս, կհիմնավորենք դրանց իրականացման մանկավարժական պայմանները։

4. Դ ա ս ա պ լա ն 1

Ուսուցիչ՝ Օվսաննա Մանասերյան՝Մարտիրոսի միջն. դպրոց

Առարկա՝	մայրենի	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**	1	**Դասարան**	4-րդ
Թեմա՝	Ա՛յ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է						
Օգտագործվող նյութեր՝	Բնագրի վերաբերյալ մեծադիր նկար, գրատախտակ, կավիճ, տեսարժան վայրերի նկարներ, հայրենիքի թեմայով պաստառներ						
Դասի նպատակը՝	• արտահայտիչ և սահուն ընթերցեն բնագիրը՝ ամրապնդելով երկխոսության մասնակիցներին իրարից տարբերելու կարողությունը • կարողանան հերոսների մասին տեղեկություններ քաղել ընթերցածից։ • Իրականացնել ստեղծագործական աշխատանքներ հայրենիքի վերաբերյալ։						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	• Զույգերով ընթերցանության միջոցով կզարգացնեն սահուն և արտահայտիչ կարդալու կարողություն։ • Կիրականացնեն ստեղծագործական աշխատանքներ՝ ներկայացնելով իրենց սերն ու վերաբերմունքը հայրենիքի նկատմամբ։ • Զուգահեռներ կանցկացնեն տեքստի և Հայաստանի մասին այլ բանաստեղծությունների և տեքստի հիմնական գաղափարի միջև, կկատարեն եզրահանգումներ։						

Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ (ներ)**
Խթանում 2-3 րոպե, Իմաստի ընկալում՝ 8-10 րոպե, Կշռադատում՝ 20-26 րոպե,	Բարձրաձայն ընթերցում են նյութը՝ կարդալու որակական մի շարք հատկանիշներ (սահուն, անսխալ, արտահայտիչ, հասկանալով)	Ուսուցիչը հանձնարարում է նորից ընթերցել նյութը «Երեք բանալի և մեկ կողպեք» մեթոդով։ Այդ նպատակով ուսուցիչը բնագիրը նախօրոք բաժանում է 2 տրամաբանական մասի՝	Ի՞նչ է հայրենիքը քեզ համար։ Ի՞նչ իմաստ էր արտահայտում բնագրի քո կարդացած հատվածը։ Բնագրի ո՞ր հատվածն է հայրենասիրության մասին,	«Երեք բանալի և մեկ կողպեք» « Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, մտքե՛ր փոխանակիր » մեթոդական հնար։

Տնային հանձ.՝ 3, Անդրադարձ՝ 5	զարգացնելու նպատակով։ Կատարել բառային աշխատանք՝ քարափ, քարապուտ, քարաթումբ, ծմակ բառերի իմաստների և ուղղագրության բացատրությամբ, լեզուն թափ առնել, հոր քթից ընկնել, հոր շունչն առնել, աչքերը չռել, ալավ-բոցին տալ դարձվածքների մեկնաբանությամբ, ինչպես նաև՝ ամպերը ձոր են որոնում, բուրմունքը մատնում է թփերի տեղը փոխաբերական իմաստներով արտահայտությունների բացատրությամբ։	պլանավորելով դադարի պահը՝ I դադար (մինչև« Տղա՛ս, շա՞տ եք սոված մնացել») II դադար (մինչև բնագրի վերջը)։ Ուսուցիչը յուրաքանչյուր մասից կառանձնացնի 3 բանալի-նախադասություն, որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար։ Կկազմակերպի նաև բառային աշխատանք բնագրի բառահումքի շուրջ։	բացատրիր սեփական բառերով։ Ո՞վքեր են կռվել հանուն հայրենիքի։ Ի՞նչ զգացմունք է արտահայտված հոր և որդու զրույցում։ Ո՞ր իմաստով է տեքստի առաջին պարբերության մեջ գործածված «որոնում» բառը։	
Տնային աշխատանք	Սահուն, վարժ, արտահայտիչ ընթերցել բնագիրը և առաջադրանք 1-ը գրել տետրում։			

Դ ա ս ա պ լա ն 2

Ուսուցիչ՝Օվսաննա Մանասերյան,Մարտիրոսի միջն. դպրոց

Առարկա՝	մայրենի	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**	1	**Դասարան**	4-րդ
Թեմա՝	Ա՛յ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-ռե՛-նի՛ք է						
Օգտագործվող նյութեր՝	Բնագրի վերաբերյալ մեծադիր նկար, գրատախտակ, կավիճ, տեսարժան վայրերի նկարներ, հայրենիքի թեմայով պաստառներ						
Դասի նպատակը՝	• վերարտադրեն բնագիրը՝ ուշադրություն դարձնելով բովանդակության հիմքում ընկած գլխավոր խնդիրների վրա, որոնց շուրջը ծավալվում է գործողությունը, • բնագրից առանձնացնեն հերոսներին բնութագրող տողերը, • ընկալելով բնագրի բովանդակությունը՝ ճիշտ պատկերացում կազմեն բարոյական արժեքների վերաբերյալ:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	• Կվերաձևակերպեն և կձևակերպեն հարցեր՝ խթանելու տեքստի շուրջ իրականացվող քննարկումը: • Կներկայացնեն իրենց ստեղծագործական աշխատանքները՝ գնահատական տալով տեքստի հերոսների մտքերին ու արարքներին: • «Երեք բանալի և մեկ կողպեք» հնարի օգնությամբ ցույց կտան իրենց վերաբերմունքը տեքստում արծարծվող հարցերի վերաբերյալ և կհիմնավորեն:						

Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** *Աշակերտներ*	**Ուսումնական գործունեություն** *Ուսուցիչ*	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ (ներ)**
Խթանում 2-3 րոպե, Իմաստի ընկալում՝ 8-10 րոպե,	Ընտրովի ընթերցանությամբ բնագրից կառանձնացնեն հերոսներին բնութագրող տողերը:	Քննարկում է տնային աշխատանքները: Կատարում է դասանյութի հարցում: Առաջարկում է դիտել դասանյութին կից տրված նկարը, ընտրել բնագրին	Մեծերն ինչու՞ էին օգտագործում «հոր քթից է թռել» արտահայտությունը: Ի՞նչը ստիպեց տղային հասկանալ, զգալ,	«Մտագրոհ»

Կշռադատում՝ 20-26 բոպե, Տնային հանձ.՝ 3, Անդրադարձ՝ 5	Առաջադրանք 2-ը խաչբառ է, որը ճիշտ լրացնելով կկարդան հայրենիք բառի հոմանիշները։ Մեկնաբանում են «Ով հայրենիքի համար չի անում ամեն ինչ, նա չի անում ոչինչ» առածը։	համապատասխան հատվածը, կարդալ բարձրաձայն, կապեր տեսնել բնագրի բովանդակության և նկարի միջև, նշել ընդհանրություններն ու տարբերությունները։ Մեկնաբանել «Ով հայրենիքի համար չի անում ամեն ինչ, նա չի անում ոչինչ» առածը։	թե ինչ է հայրենիքը։ Ի՞նչ կարելի է ասել տղայի բնավորության մասին։ Տեքստի ո՞ր տողերն են օգնում պատասխանելու այդ հարցին։ Ի՞նչն է հեղինակը համարում ահավոր բան ։ Ինչու՞, հիմնավորի՛ր։ Հոր և որդու զրույցում ի՞նչ զգացմունքներ են արտահայտում։	
:Տնային աշխատանք	Վերարտադրել բնագրի բովանդակությունը։ Գրել առածներ հայրենիքի վերաբերյալ			

Դ ա ս ա պ լ ա ն 3

Ուսուցիչ՝Օվսաննա Մանասերյան,Մարտիրոսի միջն. դպրոց

Առարկա՝	մայրենի	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**	1	**Դասարան**	4-րդ
Թեմա՝	Ա՛յ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է						
Օգտագործվող նյութեր՝	Բնագրի վերաբերյալ մեծադիր նկար, գրատախտակ, կավիճ, տեսարժան վայրերի նկարներ, հայրենիքի թեմայով պաստառներ						
Դասի նպատակը՝	• վերլուծեն բնագրի բովանդակությունը՝ արտահայտելով սեփական զգացմունքները և տպավորությունները, • բնագրից օգտագործեն փաստարկենր, վկայություններ՝ իրենց կարծիքը, գաղափարները հաստատելու համար։						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	• տեքստի բովանդակության վերաբերյալ կձևակերպեն այնպիսի հարցեր, որոնք կմղեն նոր բացահայտումների, գիտելիքների իմաստավորման։ • կմասնակցեն տեքստի բովանդակության վերլուծությանը՝ մեկնաբանելով գլխավոր մտքերը, հիմնավորելով սեփական տեսակետը։						

Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** *Աշակերտներ*	**Ուսումնական գործունեություն** *Ուսուցիչ*	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ (ներ)**
Խթանում 2-3 րոպե, Իմաստի ընկալում՝ 8-10 րոպե, Կշռադատում՝ 20-26 րոպե, Տնային հանձ.՝ 3,	Ուսուցչի առաջարկով կվերհիշեն որևէ երկխոսություն հայրենիքի վերաբերյալ՝ թանկ ու հարազատ մարդու համար։ Դերային ընթերցանությամբ արտահայտիչ ընթերցում են բնագիրը։	Օգտագործում է «Քառաբաժան» մեթոդական հնարը։ Կարելի է կիրառել կա՛մ մեծ (փոքր) խմբերով կա՛մ անհատական աշխատանքով ։ Սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ (գրատախտակ), որն անհրաժեշտ է բաժանել 4 մասի։	Ի՞նչ էիր տեսնում, լսում բնագիրը կարդալիս։ Ի՞նչ էիր զգում բնագիրը կարդալիս։ Ինչի՞ մասին է բնագիրը, գրի՛ր սեփական բառերով։	«Քառաբաժան»

Անդրադարձ՝ 5				
Տնային աշխատանք	Գրել շարադրություն «**Իմ հայրենիքը**» թեմայով			

Դ ա ս ա պ լա ն 4

Ուսուցիչ՝ Օվսաննա Մանասերյան, Մարտիրոսի միջն. դպրոց

Առարկա՝	մայրենի	**Ամսաթիվ**		**Կիսամյակ**	1	**Դասարան**	4-րդ
Թեմա՝	Հարստություն						
Օգտագործվող նյութեր՝	1. Սիլվա Կապուտիկյանի մեծադիր նկար։ 2. Պաստառ						
Դասի նպատակը՝	• Վերհիշել նախորդ դասարանում անցած գիտելիքները «բառ» «բառիմաստ» հասկացությունների վերաբերյալ։ • Ամրապնդել խոսքի մասերի վերաբերյալ ունեցած գիտելիքները, կարողանալ խմբավորել դրանք ըստ համապատասխան սյունակների։ • Սեփական բառերով վերարտադրել բնագրի բովանդակությունը • Կառուցել նկարագրական բնույթի խոսք գրքի վերաբերյալ։						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	• Կկարողանա հասկանալով ընթերցել բնագիրը • Կամրապնդվի խոսքի մասերի վերաբերյալ գիտելիքները • Կիմանա անհասկանալի բառերի բացատրությունը • Սեփական բառերով կկառուցի նկարագրական բնույթի խոսք գրքի վերաբերյալ						

Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***	**Հարցադրումներ**	**Կիրառվող մեթոդ (ներ)**
Խթանում 2-3 րոպե, Իմաստի ընկալում՝ 8-10 րոպե, Կշռադատում՝ 20-26 րոպե,	Բնագիրը ընթերցելուց հետո կատարում են բառային աշխատանք նորածանոթ բառերին արտահայտությունների իմաստների ճշգրտում և բացատրություն. դարսել, անհաս,	Ուսուցիչը հարց է տալիս, ինչ գիտեն Սիլվա Կապուտիկյանի մասին, նրա մանկական որ ստեղծագործություններին են ծանոթ։ Ուսուցչի ուղղորդմամբ վերհիշում են նախորդ դասարաններում անցած՝ «Կարծում եք, թե կատա՞կ է»,«Ավոյի ծիլը»ստեղծագործությունները։Սիլվա Կապուտիկյանը	◆ Բանաստեղծությունն ընթերցելիս ի՞նչ հասկացաք։ ◆ Ինչո՞վ համընկան ձեր ենթադրությունները բանաստեղծության հետ. հեղինակն ի՞նչն է համարում հարստություն։ ◆ Ինչու՞ է հեղինակը գիրքը համարում հարստություն։	« Մտագրոհ » «Անավարտ նախադասություն» մեթոդական հնար։

Տնային հանձ.՝ 3, Անդրադարձ՝ 5	բարձունք, թովքեր, գալիք։ Խոսքի մասերի վերաբերյալ կատարում են բազմապիսի առաջադրանքներ, որոնք ամրապնդում, խորացնում են ձևաբանական գիտելիքները, ձևավորում հմտություն տարբերակելու դրանք ։ Կազմակերպվում է «Բառքամոցի» խաղը, որը նպաստում է աշակերտների բառապաշարի հարստացմանը, օգնում է արագ կողմնորոշվելուն, սեր է արթնացնում լեզվի նկատմամբ։ Երեխաները հարստություն բառից «քամում» են նոր բառեր։ Այդ բառերից ստանում են նաև դարձգրեր. (թաս-սաթ, նյութ-թույն)։ Երեխաները մրցում են, խաղում և միաժամանակ սովորում, հարստացնում իրենց բառապաշարը։	մանուկների լավ բարեկամն էր, նրանց համար գրել է գրքեր՝«Փոքրի՛կ Արա, ականջ արա», «Տանը, բակում, փողոցում», «Մեր Լալիկը, սիրունիկ», «Մի տարով էլ մեծացանք»(կարելի է դասարանի մի անկյունում բացել Սիլվա Կապուտիկյանի վերոնշյալ գրքերի ցուցահանդես և հնարավորություն ընձեռել սովորողներին դիտելու գրքերի շապիկները, թերթելու առանձին էջեր, մտաբերելու իրենց իմացած ստեղծագործությունները հետևյալ հարցերի միջոցով. ինչի՞ մասին էին դրանք, ովքե՞ր էին հերոսները, ինչո՞վ էին դրանք հետաքրքիր և այլն)։Նրա բանաստեղծությունները մեզ ուղեկցում են մանկապարտեզից մինչև հասուն տարիք։ Այժմ կընթերցենք մի ստեղծագործություն, որը ևս գրել է Սիլվա Կապուտիկյանը, և որի միջոցով կարող ենք բացահայտել Կապուտիկյան մարդուն։	◆ Էլ ուրիշ ի՞նչ հարստություններ կան աշխարհում։ ◆ Գիրքն ինչո՞վ է առավել տեղեկություն ստանալու մյուս միջոցներից։ ◆ Գիրքն ի՞նչն է զարգացնում մարդու։	

Տնային աշխատանք	Օգտվելով բանաստեղծությունից՝ լրացրու նախադասությունները. Գիրքն ինձ սովորեցնում է։ Գիրքն ինձ օգնում է ։ Գիրքն ինձ տալիս է ։			

5. Եզրակացություն

Ուսումնասիրելով մեր առաջադիր խնդիրները՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումների.

●Տարրական դասարանների աշակերտների խոսքը այնքան էլ զարգացած չէ, խոսքում շատ են գրական նորմերին անհամապատասխան բառերն ու արտահայտությունները: Կրտսեր դպրոցականները գրական հայերենով հաղորդակցվելիս շատ են կաշկանդվում, և հարկավոր է մղել նրանց ազատ արտահայտման, հաղորդակցման:

● Երեխաների բանավոր խոսքի զարգացման համար շատ կարևոր է ձևաբանական գիտելիքների իմացությունն ու ճիշտ կիրառումը: Որքան բարձր է երեխաների ձևաբանական գիտելիքների մակարդակը, ինչպես նաև հստակորեն գիտակցված, այնքան զարգացած է նրանց խոսքը: Հանրահայտ է, որ ձևաբանության ուսուցումն օժանդակում է ճիշտ, վարժ խոսելու և կարդալու, անսխալ գրելու ունակությունների զարգացմանը: Այն երեխան, որը չունի քերականական գիտելիքների բավարար մակարդակ, չի կարող անսխալ խոսել: Հատկապես տարրական դասարաններում պետք է մեծ ուշադրություն դարձնել վերը նշված իրողությանը:

● Ուսուցումը պետք է անպայմանորեն կապել կյանքի հետ, որպեսզի երեխաներին մատչելի ու հասկանալի լինի բացատրվելիք նյութը: Պետք է օրինակները վերցնել երեխայի կենցաղից, շրջապատող իրականությունից: Ուսուցումը պետք է նաև զուգակցել դաստիարակության հետ, երեխաների մեջ մշակել բարոյական և գեղագիտական նորմեր: Աշակերտների խոսքի զարգացումը հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է նաև ուսուցման մեթոդների ճիշտ ընտրություն և գործադրում: Ուսումնասիրել և հիմնավորել ենք խոսքային մեթոդներից մի քանիսը , որոնց գործադրումը , ըստ մեր ուսումնասիրության , համեմատաբար արդյունավետ են: Ըստ այդմ, առանձնացրել ենք մի շարք առաջադրանքներ, որոնք, մեր կարծիքով, արդյունավետ են խոսքի զարգացման և ձևաբանական գիտելիքների ամրակայման համար:

Օրինակ՝

◆ Կազմի՛ր այնպիսի նախադասություններ, որ հետևյալ բառերը մի դեպքում լինեն գոյական, մյուս դեպքում՝ ածական։ Սուտասան, առաջնորդ, իմաստուն, գիտնական, բժիշկ։

◆ Կազմի՛ր մի նախադասություն ինչպիսի՞, ո՞վ, ի՞նչ է անում, որտե՞ղ հարցերին միջոցով։

◆ Առարկա և գործողություն ցույց տվող բառերով կազմի՛ր նախադասություններ։ Կռունկ, աղջիկ, հայրիկ, որսորդ Խղճալ, թռչել, կրակել, խնամել։

◆ Միևնույն գոյականի համար ընտրի՛ր համապատասխան մի քանի բայ։ Շուն, ջուր, երեխա, ծառ, հերոս, տերև։

6. Օգտագործված գրականություն

1.(Ս.Գ.Աբրահամյան, Աշակերտի խոսքի զարգացումը, Եր., « Լույս », 1973, էջ 75)

2.Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1980, էջ 412:

3.Ա.Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1980, էջ 404:

4.Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2009, էջ 291:

5.Կ.Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, Եր., 1949, էջ 129-130:

6. Ջ. Գլուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2009, էջ295:

7.Գյուլբուդաղյան , Հայոց լեզվի մեթոդիկա , Երևան , 1978, էջ 108- 109:

8.Գ. Թերզյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան ,Խոսք և հաղորդակցություն , Մեթոդական ձեռնարկ,Երևան, 2016 էջ 3, 34

9.Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, Երևան, 2016, 2-րդ համար

10.https://lib.armedu.am/